

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„-----„ ----- 2016 թ.
(արձանագրություն №)

Վավերացնում եմ
ռեկտոր Ա. Թարվերդյան
„-----„ ----- 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի քոլեջը, (այսուհետ՝ Քոլեջ), համաձայն ՀՀ Կառավարության 2002 թ. մայիսի 31-ի թիվ 643 որոշմամբ հաստատված Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կանոնադրության 21-րդ կետի, համալսարանի ինքնուրույն ուսումնական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

հայերեն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ:

Ռուսերեն՝ Сәәüñêî ðî çÿéñðááí í ûé kí ëëääæ Национальí î ãî äãðáðí î ãî yí èääðñèòáòà
Àðì áí èè имени А.Е.Кочиняна

Անգլերեն՝ Agricultural College of Armenian National Agrarian University after A. Kochinyan

1. Քոլեջի գտնվելու վայրն է՝

Երևան - 0009, Տերյան 74:

II. ՔՈԼԵՋԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ա) Ագրոպարենային համալիրի ճյուղերի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրտսեր որակավորմամբ մասնագետների պատրաստումը:
- բ) Հիմնական և ընդհանուր կրթություն ունեցող քաղաքացիներին Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ընդունելությունների կանոնների համաձայն՝ Քոլեջում ուսումը շարունակելու հնարավորության ընձեռումը:
- գ) Քոլեջի ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներին, համաձայն ՀՀ Կառավարության 08.07.2015 թ. թիվ 752-Ն որոշման, հնարավորություն է տրվում ուսումը շարունակելու Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

III. ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3. Քոլեջի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:
- 4. Քոլեջի կառավարման մարմինը՝ Քոլեջի խորհուրդն է: Խորհրդի լիազորությունների ժամկետը 3 ուսումնական տարի է:
- 5. Խորհրդի անդամների թվաքանակը և կազմը հաստատում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորը, Քոլեջի տնօրենի ներկայացմամբ:
- 6. Խորհրդի կազմում ընդգրկվում են՝
 - ա) Քոլեջում դասավանդող դասախոսներ և աշխատակիցներ,
 - բ) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորատի ներկայացուցիչը,
 - գ) Քոլեջի ուսանողական խորհրդի նախագահը,
 - դ) այլ հիմնարկներից և կազմակերպություններից հրավիրված մասնագետներ՝ Քոլեջի տնօրենի ներկայացմամբ:

Քոլեջի խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 25 %-ը՝ Քոլեջի ուսանողներն են:

Քոլեջի տնօրենը չի կարող լինել խորհրդի անդամ: Նա իրավունք ունի խորհրդի նիստերին մասնակցելու խորհրդակցական ձայնի իրավունքով:

7. Քոլեջի խորհրդի անդամն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սահմանված կարգով կարող է հետ կանչվել Քոլեջի խորհրդի կողմից: Այդ դեպքում Քոլեջի խորհրդի կազմում փոփոխությունները տնօրենի կողմից սահմանված կարգով ներկայացվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հաստատմանը:

8. Քոլեջի խորհուրդը՝

ա) սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում Քոլեջի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

բ) մշակում է քոլեջի գործունեության ընդհանուր ուղղությունները, լուծում Քոլեջի ուսումնամեթոդական գործունեության կազմակերպման և պլանավորման հարցերը,

գ) սահմանված կարգով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Քոլեջի կառուցվածքը,

դ) առաջարկություններ է ներկայացնում առարկայական մասնագիտական, քննական, ատեստավորող, մրցութային հանձնաժողովներ, մեթոդական միավորումներ, լաբորատորիաներ, ուսումնական կաբինետներ և այլն ստեղծելու վերաբերյալ,

ե) առաջադրում է Քոլեջի տնօրենի թեկնածությունը,

զ) լսում է Քոլեջի տարեկան գործունեության վերաբերյալ տնօրենի, աշխատակիցների հաշվետվությունները, և անհրաժեշտության դեպքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորին առաջարկություն է ներկայացնում նրանց զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին,

է) սահմանված կարգով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,

ը) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ լուծում է Քոլեջի գործունեության հետ կապված այլ հարցեր:

9. Քոլեջի խորհրդի նիստերը գումարվում են, որպես կանոն երկու ամիսը մեկ անգամ: Քոլեջի խորհրդի նիստերը համարվում են իրավագոր, եթե դրանց մասնակցում են Քոլեջի խորհրդի անդամների առնվազն 2/3 - ը:

10. Քոլեջի խորհրդի որոշումներն ընդունվուն են խորհրդի նիստում՝ նրա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և կենսագործվում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հրամաններով: Քոլեջի խորհրդի և տնօրենի միջև տարաձայնության առկայության դեպքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորը իրագործում է իր համապատասխան հրամանը:

11. Քոլեջի գործունեության անմիջական և օպերատիվ ղեկավարումն իրականացնում է Քոլեջի տնօրենը, որին Քոլեջի խորհրդի երաշխավորության և համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորը:

12. Քոլեջի տնօրենը՝

ա) իրեն վերապահված իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է Քոլեջի գործունեությունը,

բ) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Քոլեջի կանոնակարգը,

գ) իր իրավասության սահմաններում գործում է Քոլեջի անունից, ներկայացնում նրա շահերը, արձակում է կարգադրություններ, տալիս հանձնարարություններ, որոնց կատարումը պարտադիր է քոլեջի աշխատողների և ուսանողների համար,

դ) սահմանված կարգով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ քոլեջի աշխատողներին և դասախոսներին աշխատանքի նշանակելու վերաբերյալ,

ե) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

IV. ՔՈԼԵՋԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Քոլեջում ուսուցումը կազմակերպվում է ըստ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մասնագիտությունների անվանացանկերի, դրանց բնութագրերի առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների:

14. Ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով քոլեջում սահմանված, կարգով ստեղծվում են առարկայական մասնագիտական հանձնաժողովներ, մեթոդական միավորումներ:
15. Քոլեջում ուսանողների ընդունելությունը կատարվում է հիմնական և ընդհանուր կրթություն ունեցող քաղաքացիներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ ընդունելության կանոնների համաձայն:
16. Քոլեջում ուսուցման հիմնական ձևը ցերեկային (արտադրությունից կտրված) ուսուցումն է, որը կազմակերպվում է դասախոսությունների, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքների, ուսումնական և արտադրական պրակտիկաների և խորհրդատվությունների միջոցով:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քոլեջում կարող են կիրառվել նաև ուսուցման հեռակա, երեկոյան և դրսեկ (էքստեռն) ձևերը:
17. Քոլեջում ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու կիսամյակից բաղկացած ուսումնական տարով: Յուրաքանչյուր կիսամյակ ավարտվում է քննաշրջանով:
18. Քոլեջի ուսումնական պլաններով նախատեսված բոլոր պահանջները կատարած ուսանողներին տրվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական նմուշի ավարտական վկայական (դիպլոմ)՝ կրտսեր մասնագետի որակավորմամբ:

V. ՔՈԼԵՋԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

19. Քոլեջի աշխատողների պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրության հիման վրա՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից:

VI. ՔՈԼԵՋԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20. Քոլեջի գույքը և ֆինանսական միջոցները պատկանում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանին:
21. Քոլեջի ֆինանսավորման աղբյուրներն են՝
- ա) վճարովի ուսուցումից գոյացած միջոցները,
 - բ) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից նյութական ներդրումները,

- զ) ծառայությունների մատուցումից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից ստացված եկամուտները,
 - դ) բարեգործական ներդրումները, ՀՀ և օտարերկրյա ձեռնարկությունների, հիմնարկների և քաղաքացիների նվիրատվությունները,
22. Քոլեջը սահմանված կարգով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միջոցով իրավունք ունի՝
- ա) կնքելու տնտեսական և այլ պայմանագրեր, այդ թվում՝ օտարերկրյա ձեռնարկությունների, հիմնարկների և քաղաքացիների հետ,
 - բ) ձեռք բերելու քոլեջի գործունեության համար անհրաժեշտ գույք,
 - գ) ներգրավելու վարձու աշխատողների՝ նրանց հետ կնքելու աշխատանքային պայմանագրեր:
23. Քոլեջը պարտավոր է ապահովել իրեն հատկացված պետական գույքի պահպանումը և արդյունավետ օգտագործումը:

VII. ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

24. Քոլեջի լուծարումը կամ վերակազմակերպումը կատարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: